ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«09» օգոստոսի 2023թ. N ՄՈ/351-Ա

ք. Արմավիր

«ՇԵՆԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԴԵՐԵՆԻԿ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Դերենիկ Հակոբյանի 2023 թվականի օգոստոսի 8-ի դիմումը.

որոշում եմ

1. «Շենավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Դերենիկ Հակոբյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդը 2023 թվականի օգոստոսի 14-ից սեպտեմբերի 15-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Դերենիկ Հակոբյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Շենավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Շենավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Սառա Խանոյանին:
3. 2023 թվականի օգոստոսի 14-ից սեպտեմբերի 15-ը ներառյալ «Շենավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Սառա Խանոյանի աշխատավարձի վճարումն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Դերենիկ Հակոբյանին աշխատանքի մեջ համարել 2023 թվականի սեպտեմբերի 18-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Недействительная подпись

VERIFIED OCSP 09.08.2023 17:49:22 GMT+4

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ